Սկզբում հայկական կեսում կազմակերպվեցին երկու գավառներ— Զանգեզուրի և Մեղրու՝ իրարից Արեգունու—Մեղրու—Գյունեյի կամ Զավնդուրի, այժմ՝ Մեղրու լեռնաբազուկով բաժանված։ 1935 թ. նոր վարչական բաժանումով, երբ գավառները վերակոչվեցին շրջանների, Զանգեզուր միասնական գավառից կազմվեց երեք շրջան, այն է՝ Սիսիանի, Գորիսի և Կապանի։ Կապանը ընդգրկում է հարավային կողմերը և մասնավորապես Ողջիի (Օխչիի) գետահովիտը։ Նրան մյուս երկու շրջաններից բաժանող սահմանն անցնում է Բարգուշատի (Բերգուշետի) լեռնաբազուկի ջրբաժան սեռով և արևելքում ընթանում է Քաշունի (Զայզամի) գետի հոսանքով։ Այս գծից դեպի հյուսիս, Որոտանի (Բարգարչայի) ավազանում Սիսիանի և Գորիսի շրջանները իրարից անջատող սահմանը ընթանում է Լոր և Տաթև գյուղերի միջով ձգվող լեռնոստի սեռով և Լծեն գյուղից արևմուտք հատում է Որոտան գետը, ուղիղ դիմում է դեպի հյուսիս Եռաբլրի (Ուչթափալարի) սարահարթով և հանգուցվում է Ադրբեջանական ՍՍՀ-ի սահմանի հետ Մեծ Իշխանասար—Սուրբ Օհաննես (Մեծ Իշիխլի) լեռան գագաթին։ Եռանկյունու արևելյան ադրբեջանական կեսում նախկին ցարական Զանգեզուր գավառից կազմված են Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլուի և Զանգելանի վարչական շրջանները։

Նախամոնղոլյան ժամանակաշրջանում, նրա գավառակներից Բուն Զանգեզուրը համընկնում էր Հաբանդ գավառի հետ, որին արևմուտքից սահմանակից էր Ծղուկը, այժմյան Սիսիանը, իսկ հարավից Բաղքը, այժմյան Կապանը։ Բաղքի արևելյան կողմը կոչվում էր Բարկուշատ կամ Քաշունիք[6]։ Հնում Կապան անունը տրվում էր հատկապես Ողջի (Օխչի) գետի և նրա վտակ Գեղվա գետի բարդ հովտին։ Գեղվա գետի ավազանն է, որը կրել է մասնավորապես Զորք անունը[7]։

Զանգեզուրը Հայկական լեռնաշխարհի պատմության մեջ ապրել է ինքնօրինակ կյանքով։ Նա մտնում էր միջին դարերում որպես մի մաս շատ ավելի ընդարձակ աշխարհագրական միության մեջ, որն ընդգրկում էր և՛ Սևանա լճի ավազանը, և՛ այժմյան Հայոցձորը (Դարալագյազը, հնում՝ Վայոցձորը), և՛ Նախիջևանի ներկա հանրապետությունը և կրում էր հատկապես Սյունիք կամ Սիսական անունը։

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՖԻԶԻԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ ուզում եմ կանգ առնել գլխավորապես Զանգեզուրի ֆիզիկա-աշխարհագրական այն պայմանների վրա, որոնց ազդեցությունը որոշակի նկատվում է բնակչության ծագման պրոցեսի, նրա տեղաշարժերի ընթացքի և ներկա դասավորության մեջ։ Այս տեսակետով կարևոր դեր է խաղացել մանավանդ եղրավորվող շղթաների բնույթը։ Այդ շղթաների մեջ պարփակված եռանկյունու շրջանակը կազմում են արևմուտքից՝ Զանգեզուր-Ալանդյազի, հնում՝ Սյունյաց, արևելքից՝ Ղարաբաղի, հնում՝ Արցախի լեռնաշղթաները, հարավից նրան փակում է Ղարաբաղի լեռնաղեղը։ Եռանկյունին ոռոգող գետերի՝ Հա-

---

[6] Օրբելեան Ստ., Պատմութիւն նահանգի Սիսական, Ղուկասեան մատենադարան, Թիֆլիս, 1910, էջ 566։

[7] Ալիշան Ղ., Սիսական, 1893, Վենետիկ, էջ 206 և հաջ.։